«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի պաշտոնակատարի
02.04.2019 թ. թիվ 204 Լ/Կ հրամանի

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից
Արձանագրություն թիվ «3» 28.03.2019թ.

Վանաձոր

2019թ.

I.Ընդհանուր դրույթներ

1. Սույն փաստաթուղթը սահմանում է Վանաձորի պետական համալսարանում հեռավար ուսուցման համակարգի ներդրման քաղաքականությունը ոչ ֆորմալ կրթության համակարգում:

2. Հեռավար ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և դասավանդողի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով:

3.Հեռավար կրթությունն ապահովվում է կրթական և տեղեկատվական տեխնոլոգիաների համակազմով, որի ժամանակ դասավանդողների և սովորողների միջև իրականացվում է նպատակաուղղված գործունեություն անկախ գտնվելու վայրից և ժամանակի բաշխումից:

II.Իրավիճակի նկարագրություն

4.Աշխատաշուկայի պահանջների արագ փոփոխությունը հանրությանը առաջադրում է նոր մարտահրավերներ, և յուրաքանչյուր քաղաքացի շարունակական կրթության համատեքստում անընդհատ անհրաժեշտություն է ունենում վերապատրաստվելու, ձեռք բերելու նոր գիտելիքներ և հմտություններ, լինելու կոմպետենտ և մրցունակ մասնագետ:

5.Վանաձորի պետական համալսարանը ունի համապատասխան ներուժ ոչ ֆորմալ կրթության ձևաչափով կազմակերպելու հեռավար կրթություն տարբեր թիրախային խմբերի համար: Վարելով ճկուն քաղաքականությունը՝ Համալսարանը կարող է կիրառել առցանց կրթության հնարավորությունները և մշակել, հանրությանը ներկայացնել կրթական ծառայությունների նոր մոդել, կազմակերպել տարածաշրջանում սոցիալական պատվերին և ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող վերապատրաստումներ, վերադրակավորումներ:

III.Հեռավար ուսուցման համակարգի ներդրման նպատակը և խնդիրները

6.Հեռավար ուսուցման համակարգի ներդրման նպատակներն են.

- ստեղծել հեռավար կրթական հարթակ,
- ներդնել և զարգացնել հեռավար կրթության հարթակը,
- հեռավար կրթական հարթակում տարբեր թիրախային խմբերի համար կազմակերպել ոչ ֆորմալ կրթություն,
- համագործակցել տեղական, տարածաշրջանային, ազգային կազմակերպությունների հետ:

7.Հեռավար ուսուցման համակարգի ներդրման խնդիրներն են.

- աշխատանքային խմբերի ձևավորում հեռավար կրթական հարթակի ուսումնամեթոդական հենքի ստեղծման նպատակով.
- հեռավար կրթական հարթակի աշխատակազմի կարողությունները զարգացում
- համագործակցում ամբիոնների հետ ոչ ֆորմալ ուսուցման համակարգում դասընթացների ներդրման նպատակով
- հեռավար կրթական հարթակի դասընթացների մատչելիության և հասանելիության մեծացում
- մարկետինգային միջոցառումների իրականացում տարբեր թիրախային խմբերի ներգրավման, կորպորատիվ փաթեթների կիրառության նպատակով
- կրթության որակի ապահովում հեռավար կրթության համակարգում
- շահառուների կարիքների պարբերաբար ուսումնասիրություն հեռավար ուսուցման համակարգում ուսումնառության ու դասավանդման համապատասխանեցման, հետադարձ կապի ապահովման նպատակով:
- հեռավար ուսուցման համակարգի զարգացում, կայունության ապահովում:
- հեռավար ուսուցման համակարգի զարգացման միտումով նորարարական մոդելների մշակում:

IV.Հեռավար ուսուցման համակարգի ներդրում

8. Համալսարանում հեռավար ուսուցման համակարգի ներդրման պատասխանատվությունը կրում են էլեկտրոնային կրթական տեխնոլոգիաների կառավարման և սպասարկման բաժինը, ուսումնամեթոդական վարչությունը, ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժինը, որակի ապահովման կենտրոնը:

9.Համալսարանում հեռավար ուսուցման համակարգի ներդրման նպատակով իրականացվում են էլեկտրոնային կրթական հարթակի ծրագրային ապահովման, ուսումնամեթոդական նյութերի ստեղծման, կազմակերպական աշխատանքներ, մարկետինգային ուսումնասիրությունների, ֆինանսական մուտքերի արդյունավետության և ռիսկերի գնահատման, որակի ապահովման աշխատանքներ:

9.1.Էլեկտրոնային կրթական հարթակի ծրագրային ապահովման նպատակով էլեկտրոնային կրթական տեխնոլոգիաների կառավարման և սպասարկման բաժինը ձևավորված տեխնիկական առաջադրանքի հիման վրա ստեղծում է է-սերվերային համակարգ Moodle հեռավար ուսուցման համակարգի տեղակայմամբ և կարգաբերմամբ: Ստեղծված հարթակը թեստավորումից և փորձարկումից հետո կգործարկվի ուսումնամեթոդական ռեսուրսների հենքի ստեղծման համար:

9.2.Ուսումնամեթոդական նյութերի ապահովման հիմքը կազմում են ուսումնամեթոդական փաստաթղթերը թղթային և/կամ էլեկտրոնային տեսքով: Ուսումնամեթոդական նյութերի ստեղծման աշխատանքներում նախատեսվում է Համալսարանի ուսումնամեթոդական վարչության և էլեկտրոնային կրթական տեխնոլոգիաների կառավարման և սպասարկման բաժնի համագործակցություն, որի շրջանակներում կստեղծվեն.

- հեռավար կրթության հարթակի շահառուների ուղեցույցեր. ″Դասախոսի ուղեցույց″, ″Ուսանողի ուղեցույց″:
- ուսումնամեթոդական նյութերի ստեղծման ուղեցույցեր, որտեղ կնկարագրվեն դասախոսությունների, տերմինաբանական բառարանների, թեստերի կազմման, սեմինարների և ֆորումների կազմակերպման, գնահատման չափանիշերի սահմանման համար անհրաժեշտ պահանջներ:

Փաստաթղթերի ստեղծումը կիրականացվի փուլերով՝ նախապատրաստական, փորձարկման և ներդրման:

9.3.Կազմակերպական աշխատանքներում նախատեսվում են.

- դասընթացների կազմակերպում մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացման նպատակով,
- համագործակցություն ամբիոնների հետ մարկետինգային ուսումնասիրությունների և դասընթացների ընտրության նպատակով,
- համագործակցություն լրատվության և տպագրության բաժնի հետ գովազդի կազմակերպման և շահառուների հավաքագրման, տեղական, տարածաշրջանային, ազգային կազմակերպությունների հետ համագործակցելու նպատակով:
- համագործակցություն իրավաբանական բաժնի հետ հեռավար կրթական համակարգի գործունեության իրավական հենքի ապահովման նպատակով:

9.4.Ֆինանսական մուտքերի արդյունավետության և ռիսկերի գնահատման նպատակով նախատեսվում է ֆինանսական ռեսուրսների կառավարման բաժնի կողմից յուրաքանչյուր դասընթացի համար նախատեսվող ծախսերի հաշվարկում, ֆինանսական մուտքերի արդյունավետության և ռիսկերի գնահատում, զեղչային համակարգի կիրառման հնարավորությունների քննարկում:

9.5.Որակի ապահովման աշխատանքներն նպատակաուղղված են շահառուների կարիքների պարբերաբար ուսումնասիրությանը, կրթության բովանդակության, արդյունքների և ուսուցման տեխնոլոգիական որակի ցուցանիշները գնահատմանը, որն իրականացվում է համալսարանի որակի ապահովման կենտրոնի հետ համագործակցության արդյունքում: Հեռավար

ուսուցման համակարգի ներդրման բոլոր փուլերում նախատեսվում է իրականացնել հետադարձ կապի ապահովում, արդյունքների քննարկում և հաշվետվողական զեկույցի ներկայացում:

5.Եզրափակիչ դրույթներ

10.Հեռավար ուսուցման ներդրման քաղաքականությունն ընդունվում է համալսարանի գիտական խորհրդի նիստում:

11.Հեռավար կրթական հարթակի ներդրման համար պատասխանատու ենթակառույցները հաշվետու են համալսարանի ռեկտորին: